ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ ՇՐՋԱՆՈՒՄ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հավատարիմ մեր Հայրերի սուրբ ավանդությանը, Մեծի Պահոց շրջանում, փետրվարի 28-ից սկսյալ, մայրաքաղաքի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում ամեն չորեքշաբթի, երեկոյան ժամերգությունից հետո, հանդես եկավ քարոզիչությունների շարքով՝ պահոց շրջանին պատշաճ ապաշխարության եւ հոգեւոր պահեցողության թեմաներով:

Հոգեւոր մխիթարության ու բերկրանքի զգացումն էր ամեն անգամ պարուրում եկեղեցու հավատավոր զավակներին, քանզի Սուրբ Սարգիս եկեղեցի կատարած իր շնորհաբեր այցով Վեհափառ Հայրապետը վերստին աղոթակից դարձավ, կրկին հաղորդակցվեց իր հոգեւոր հոտի անդամների հետ եւ կիսեց Մեծի Պահոց շրջանում ունեցած իր զգացումներն ու ապրումները, որի անհրաժեշտությունը այդքա՜ն ունի յուրաքանչյուր հավատացյալ հայորդի:

...Փետրվարի 28-ին, հավարտ խաղաղական ժամերգության Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը բարիգալստյան ու որդիական երախտիքի խոսքեր ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհաբեր այցի համար՝ իր աղոթքը վերառաքելով առ Աստված վասն Հայրապետի կենաց արեւշատության եւ ձեռաց բոլոր գործերի հաջողության: Սրբազանը ի մասնավորի ասաց.

«Վեհափառ Տեր, թող Աստված միշտ ծաղկյալ պահի Լուսավորչի գավազանը Ձեր աջում եւ ուժ, կարողություն եւ եռանդ պարգեւի, որպեսզի մշտապես, ինչպիսի հոգնություն էլ ծանրացած լինի Ձեր ուսերի վրա, Դուք կարողանաք Ձեր Հայրական սերը, հոգածությունը այսպիսի ջանացությամբ հասցնել մեր հավատացյալ ժողովրդին»:

Այնուհետեւ Սրբազանը հրավիրեց Նորին Սուրբ Օծությանը իր հայրական պատգամը, հայրապետական օրհնությունն ու հոգու լույսը բաշխել մեր եկեղեցու բարեպաշտ զավակներին, որին նրանք հաղորդակցվեցին ամեն չորեքշաբթի ողջ Մեծի Պահոց շրջանում:

Անահիտ Մեղրակյան